— Ես զարմանում եմ, թէ ինչի՞ց են յառաջ գալիս այդ մատնութիւնները:

Տէր հայրը, որ մինչեւ այդ ժամանակ լուռ էր, պատասխանեց.

— Եթէ դու կարդացած լինէիր մեր ազգի պատմութիւնը, չէիր զարմանայ, սիրելի քոյր: Տխո՛ւր է մեր անցեալը, եւ մեր ներկայ կեանքը անցեալի շարունակութիւնն է: Ես շատ տեղեր եմ ման եկել, շատ երկրներ եմ տեսել, բայց ոչ մի ազգ չեմ տեսել, որ հայի նման լինի: Մի ազգ, որի հետ կարելի է համեմատել հային են հրէաները: Բայց հրէան եւս շատ բաների մէջ բարձր է հայից: Մի ժողովրդի ճնշոած, ստրկացած, հալածոած գրութիւնը աւելի սեղմում է նրանց եւ աւելի ամրապնդում է նրանց մէջ միութեան կապերը: Եւ հրէաները այդ միութիւնը ունեն, բայց հայերը չունեն: Ես մինչեւ այսօր չեմ կարողացել հասկանալ, թէ ինչո՞ւ նոյն շարժառիթները, այսինքն հալածանքը եւ ճնշումն, յառաջ չեն բերել հայերի մէջ այն միութիւնը, որ կայ հրէաների մէջ, քանի որ այդ երկու ազգերի դրութիւնը շատ նման է միմեանց: Տեսնում ես, Աղոանիստանի, Բելուջիստանի կամ Բուխարայի խորքերում մի քանի տուն հրէաներ, նրանք դարերով ապրում են այնտեղ եւ օր ըստ օրէ աճում են, բազմանում են, որովհետեւ շատ սերտ կերպով միացած են միմեանց հետ: Բայց հայ գաղթականները, մինը միւսին ոչնչացնելով, վերջապէս սպառւում են: Որտեղ երկու տուն հայեր կան, նրանց մէջ չորս կուսակցութիւն կայ: Անմիաբանութիւնը վաղեմի ժամանակներից մեր ազգի կեանքի մէջ այն ուտող, մաշող ցեցն է եղել, որ ժառանգաբար անցել է մեզ, եւ որ սպառել է ազգային մարմինը: Մեր պատմութեան մէջ կարող էք տեսնել հազարաւոր օրինակներ, մանաւանդ այն դարերում, երբ պարսիկները, յոյները, արաբացիները, սելջուկները եւ մոնգոլական զանազան ցեղեր կրակով եւ արիւնով ոչնչացնում էին Հայաստանը: Նրանց առաջնորդները միշտ եղել են իրանք հայերը, եւ միշտ հայերից միացած են եղել թշնամու հետ: Այժմ հասկացա՞ր, սիրելի քոյր, թէ ինչի՞ց են յառաջ գալիս այս մատնութիւնները, որ քեզ այսպէս խռովեցնում են:

— Բայց միթէ՞ օտարի լուծը աւելի քաղցր է, — հարցրեց տիկինը վշտացած ձայնով:

— Այո՛, հայը սիրում է օտարի լուծը: Մեր պապերը չէի՞ն, որ դիմեցին պարսից Վռամ արքային եւ նրանից խնդրում էին, որ հայ թագաւորը վեր առնէ եւ նրա տեղը պարսից մարզպան դնէ, եւ այսպիսով կործանեցին Արշակունեաց հզօր պետութիւնը: Դարձեալ մեր պապերը չէի՞ն, որ Անիի բանալիները ուղարկեցին յունաց կայսրին եւ իրանց ձեռքով Բագրատունեաց թագաւորութեան հիմքը փորեցին: Եւ մեր Վասպուրականը, որ մի ժամանակ հայոց առանձին թագաւորութիւն էր, Արծրունի Սենեքերիմ թագաւորն